

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԻՆ
(15 օգոստոս 1993 թ.)

«Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»։

«Անթառամ ծաղիկ անդատապարտ շառաւիղ վերաբուսեալ յարմատոյն յԵսսեայ, զքեզ Եսայիաս կանխաւ վերագոչեաց եօթնարփեան շնորհաց հոգւոյն ընդունարան գոլ»։

Սիրելի հավատացյալներ,

Այս գեղեցկահյուս շարականի տողերը նվիրված են սուրբ կույս Աստվածածնին։ Հավանաբար սույն տողերը գրաբար և բարդ լեզվով լինելու պատճառով չկարողացաք բովանդակությունը ամբողջությամբ ըմբռնել և հասկանալ։

Ահա թարգմանությունը. «Անթառամ ծաղիկ, չդատապարտված շառավիղ Հեսսեի արմատից վերաբուսած, քեզ Եսայի մարգարեն կանխավ գուշակելով ասաց, որ դու ես Ս. Հոգու յոթնարփյան շնորհների ընդունարանը»։

Այսօր սուրբ կույս Աստվածածնի վերափոխման տոնն է, ամենակարևորը թերևս Աստվածածնին նվիրված եկեղեցական տոներից։ Այս տարի օգոստոսի 15-ը հանդիպելով կիրակի օրվան, քրիստոնեական բոլոր եկեղեցիները այն տոնում են միասին։ Սուրբ կույսի վերափոխման այս տոնը մեր Եկեղեցու հինգ կարևոր տաղավարներից չորրորդն է իր շաբաթապահով և իննօրյա տոնակատարությամբ։

Այս տոնի առթիվ հավատացյալներս վերստին անդրադառնում ենք Աստվածածնի կատարած դերին, օրինակ ենք վերցնում նրա կյանքը մեզ համար և հիանում նրա փառավորյալ անձնավորությամբ։ Այդ նկատի ունենալով է, որ շարականագիրը նրան նմանեցրել է «Ս. Հոգու յոթնարփյան շնորհների ընդունարանի»։

Ո՞վ էր Սուրբ Կույսը։ Նա դուստրն էր Հովակիմի և Աննայի։ Վերջիններս ամլության պատճառով զավակ չէին ունենում, նրանք ուխտ կատարեցին և խոստացան Աստծուն, որ զավակ ունենալու դեպքում՝ տղա կամ աղջիկ, նրան նվիրելու են տաճարին։ Աստված լսեց նրանց աղերսը և հակա-

ռակ Անձայի առաջացած տարիքին, պարգևեց նրանց անուշիկ մի դուստր, որի անունը դրեցին Մարիամ։ Մեզ հայտնի չէ, թե Մարիամը Նազարեթո՞ւմ ծնվեց, թե՞ Բեթղեհեմում։ Այս մասին պատմական ոչ մեկ տեղեկություն չըկա։ Կարևորն այն է սակայն, որ նա լցված էր Աստուծո պարգևած շնորհներով, և նրա կյանքը, մանկության շրջանից սկսած, եղավ՝ ճվիրումի կյանք. ճվիրում և ծառայություն Աստուծո տաճարին։ Երբ նրա հասունացման տարիքը հասավ, նա տաճարից վերադարձավ տուն, նշանվեց Հովսեփ անունով ատաղձագործ մի մարդու հետ, որ նույնպես Աստուծո շնորհով էր լցված։

Աստված տեսնելով Մարիամի սրբակյաց կյանքը, աշխարհի բոլոր կանանց միջից միայն նրան ընտրեց, դառնալու խոստացված Փրկչի մայրը, դառնալու «Աստվածամայր», «Քրիստոսակիր»։ Մարիամը Ս. Հոգու այցելությամբ հղիացավ և Բեթղեհեմում ծնունդ տվեց մարդկության Փրկչին՝ Հիսուսին։

Սուրբ կույս Մարիամի անձի մասին Նոր Կտակարանում շատ քիչ տեղեկություն է տրված։ Հավանաբար նա 14—18 տարեկան էր, երբ ծնունդ տվեց մանուկ Հիսուսին։ Մարիամին և Հովսեփին Նոր Կտակարանում հանդիպում ենք կրկին անգամ, երբ Հիսուս 12 տարեկան հասակում ընծայվեց տաճարին։ Այս առթիվ Ավետարանն ասում է, թե նրա ծնողները Երուսաղեմից դեպի Գալիլիա երկօրյա ճանապարհ էին կտրել։ Նրանք երբ Հիսուսին չգտան ուխտավորների բազմության մեջ, ետ դարձան Երուսաղեմ և նրան գտան տաճարում, օրենքի վարդապետների հետ զրուցելիս։ Հետագայում Մարիամին նորից հանդիպում ենք Կանայի հարսանյաց հանդիսության ժամանակ, երբ նա խնդրում էր իր Որդուն ապառված գինու փոխարեն գինի ճարել։ Հիսուս Իր վարդապետության սկզբին իր առաջին հրաշքը էր գործում, Կանայի հարսանիքի ընթացքում կուժերի թակույկների մեջ պահված ջուրը ընտիր գինու վերածելով։

Հիսուսի ծնողների մասին Ավետարանում նշված հաջորդ դեպքը հետևյալն է. երբ Հիսուս քարոզությամբ գոնվում էր Կափառնաում, այստեղ նրան հայտնում են, որ իր ծնողները փնտրում են իրեն։

Այնուհետև սուրբ Կույսին հանդիպում ենք Գողգոթայի բարձունքում, խաչափայտի մոտ, երբ Հիսուս, իբրև դատապարտյալ, խաչ էր բարձրացված և կենաց ու մահվան տագնապների մեջ էր։ Այդ պահին նա իր ակնարկը դեպի իր մայրը դարձնելով՝ պատվիրեց իր սիրելի աշակերտ Հովհաննեսին և ասաց. «Ահա քո մայրը»։

Հավանաբար սուրբ Աստվածածինը յուղաբեր կանանցից մեկն էր, որ առաջիններից եղավ վկայելու իր Որդու հարությունը մեռելներից։

Հիսուսի համբարձումից հետո, սուրբ Կույսը մնացել էր Երուսաղեմում, մյուս աշակերտների հետ, ապասելով իր Որդու խոստումին, թե շնորհների և երկնային առատ պարգևների բաշխման համար Սուրբ Հոգուն է առաքելու իր բոլոր աշակերտներին, նախքան նրանց մեկնումը քարոզության։

Պենտեկոստեի օրը, Քրիստոսի հրաշափառ հարությունից ճիշտ հիսուն օր հետո։ Սուրբ Հոգին հրեղեն լեզուների կերպարանքով իջավ վերնատունը հավաքված Ս. Աստվածածնի, առաքյալների և մյուս աշակերտների վրա։ Նրանք զարմանահրաշ զորությամբ լցված՝ սկսեցին խոսել աշխարհի տարբեր լեզուներով։ Երուսաղեմում գտնվող տեղացի և օտար մարդիկ, տեսնելով այդ, զարմացել էին, նրանք ենթադրում էին, որ Հիսուսի աշակերտները թերևս գինով են։ Վերնատան բնակիչները, ճիշտ է, հարբել էին,

բայց ոչ թե սովորական գինիով, այլ՝ Սուրբ Հոգու շնորհների, երկնավոր խնջույքի հոգևոր գինիով։ Հիսուսի աշակերտները, քիչ ժամանակ անց, գընացին այն ժամանակվա ծանոթ աշխարհով մեկ, բանին կենաց քարոզությամբ ուսուցանելու, մկրտելու և դարձի բերելու հեթանոս աշխարհը։

Կա մի ավանդություն, ըստ որի սուրբ Կույսը գնացել է Եփեսոս Հովհաննես առաքյալի հետ։ Առավել ճշմարտացի ավանդությունն ասում է, որ նա մնացել է Երուսաղեմ Հիսուսի աշակերտների հետ և գրեթե ամեն օր եղել է նրանց շրջապատում, նրանք միասին են աղոթել, հոգևոր մխիթարություն ստացել և օգտվել են հավաքական սեղանի բարիքներից։

Ենթադրվում է, որ Աստվածամայրը իր աչքերը փակել է հատուն տարիքում։ Հիսուսի աշակերտները Տիրամոր մահվանից հետո Երուսաղեմում նրա մարմինը տարան ու ամփոփեցին Գեթսեմանի պարտեզի լանջին գտնվող նրանց ընտանեկան դամբարանում։ Ասվում է, թե Տիրամոր գերեզմանի մոտ երեք օր ու գիշեր լսվել են հրեշտակային երգասացության ձայներ։ Բարթողիմեոս առաքյալը իր քարոզչական աշխատանքից քիչ ժամանակ անց երբ վերադառնում է Երուսաղեմ, լսելով Տիրամոր մահվան մասին, շատ է փափագում այցելել նրա դամբարանը՝ վերջին անգամ տեսնելու և իր որդիական սերն ու հարգանքը մատուցելու նրան։ Երբ գտնում են դամբարանի քարը, տեսնում են, որ Տիրամոր մարմինը չկա այնտեղ, և անմիջապես հիշում են իրենց Տիրոջ խոստումը, թե Աստվածամայրը նույն մարմնով փոխադրվելու է երկինք Աստուծո արքայության մեջ բնակվելու համար։ Սրա այս հրաշք դեպքի հիշատակն է, որ այսօր քրիստոնեական Եկեղեցիները տոնախմբում են։ Սուրբ կույս Մարիամը գերեզմանից իր իսկ հողեղեն մարմնով փոխադրվել է դրախտ հրեշտակների թևերով՝ իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի փառքը վայելելու, աստվածային լուսեղեն հարկերի մեջ բնակվելու համար։

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ, սուրբ կույս Մարիամը ամեն բանից առաջ տիպար մի մայր է մեզ համար, նման բոլոր մայրերին. այս իսկ պատճառով Տիրամոր վերափոխման տոնը տոնն է նաև բոլոր կանանց, մեր սիրելի մայրերի և քույրերի, մեծ լինեն նրանք թե փոքր։ Այս արտառուչ տոնի առթիվ մաղթում ենք, որ Տիրամայր Ս. Աստվածածնի շնորհները, որպես ցող երկնքից իջնեն մեր մայրերի վրա։ Ինչպես արքազան շարականագիրն է ներկայացնում, սուրբ Կույսը իբրև ողկույզ ճմլվեց, և այդ ողկույզի ճմլումից ծնունդ առավ Աստվածորդին՝ Հիսուս Քրիստոս։ Եվ քիչ հետո մեր կատարելիք խաղողի օրհնության արարողությունը խորհրդանշում է նաև Քրիստոսի զոհողությունը մարդկության մեղքերի քավության համար։ Հիսուս Ավետարանում ասում է. «Ես եմ որթը կենդանի», և իմ Հայրը այգեպան է։ Հիսուս ինքն է խաղողը, որը մեզ կյանք կպարգևի և զվարթություն կպատճառի։ Հիսուս ինքը ևս իբրև ողկույզ ճմլվեց, մատնվեց, դատապարտվեց, ծեծվեց և խաչվեց։ Գողգոթայի բարձունքում նա ճմլվեց և իր արյամբ փրկեց մարդկային ցեղը մեղքի կապանքներից։ Աստվածամայրն իբրև ողկույզ ճմլվում է, և Քրիստոս է ծնվում. Քրիստոսի ճմլումից մարդկության մեղքերն են քավվում։ Որքան գեղեցիկ և որքան գրավիչ աստվածային զոհաբերություն է սա։ Վերնատան մեջ Հիսուս կանխագգալով իր մահը՝ հացն ու գինին մատուցեց իր աշակերտներին և պատվիրեց, որ ուտեն և խմեն իր մարմինն ու արյունը՝ արժանանալու համար փրկության։

Սիրելի հավատացյալներ, Տիրամոր կերպարի մեջ մենք տեսնում ենք նրա ունեցած սերն ու զոհողությունը, նրա նվիրումն ու պաշտամունքը, նրա

անասակարկ ծառայությունը Աստուծո սուրբ սեղանին։ Երբ խոսում ենք Հիսուսի մասին, տեսնում ենք, թե նա այնքան մեծ սեր ուներ մարդկության հանդեպ, որ նույնիսկ Իր ամենաթանկ կյանքը զոհեց մարդկության փրկության համար։ Նշանակում է, որ մեր կյանքում շատ կարևոր է ազգիվ ու վանք նպատակի համար զոհողություն հանձն առնել։ Որևէ զոհողություն, որ նպատակ չունի, անարժեք է։ Նպատակն է, որ զոհողությունը վեհացնում ու արբագործում է։ Այս իմաստով որքան ճշմարիտ և այժմեական է հնչում Վարդանանց նշանաբանը. «Մահ իմացեալ անմահութիւն է»։

Այսօր Ս. Աստվածածնի, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի զոհագործությունը խտացվում է խաղողի ճմլումի խորհրդով։ Մեր ժողովուրդը ևս գիտակցված զոհողություն է հանձն առել Հայաստանի սահմաններից մինչև Արցախ նույն քաջությամբ և հավատով, ինչպես Սարդարապատում և Վարդանանց օրերին։ Եվ այս գիտակցված զոհողությունը անպայման կիմաստավորվի և կպտղաբերի։ Մեր ժողովուրդը մի օր իր ազգիվ ու վանք նպատակներին կհասնի և խաղաղ ու երջանիկ կյանքով կապրի քաղաքակիրթ այլ ժողովուրդների շարքում։ Մաղթում եմ, որ դուք լինեք քաջ, հավատով լի, անաղարտ պահեք մեր պատմությունը, մշակույթն ու ավանդությունները՝ ամուր կանգնած մեր հավատի վեմի վրա, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն է այսօր և հավիտյան։

Ս. Աստվածածնի տոնի առթիվ շնորհավորում եմ ձեզ բոլորիդ, սիրելի կանայք և տղամարդիկ։ Լավ իմացեք մարդու արժեքը, իզուր թշնամություն, կագ ու կռիվ մի ստեղծեք միմյանց նկատմամբ, եղեք սիրով և համբերությամբ լեցուն, միշտ հարգելով և օգնելով իրար։ Եվ երկնավոր Հայրը, իբրև պատասխան, մեզ ուրախություն կպարգևի և կօրհնի մեր ընտանեկան բույները, դարձնելով դրանք դրախտ երկրի վրա։

Մեր Տիրոջ Քրիստոսի անունով լինեք օրհնյալ այժմ և հավիտյան. ամեն։